

‘ Ար ակուայ հանող պղոց ցաւը նելեցնե-
լու հնարք :

ԵՐԲՈՐ տղայ մը եօթը ութը կամ
տասը ամնուան կ'ըլլայ երբեմն ալ առ-
ջի տարին լմընցընելու մօտերը, առ-
ջեի ութը ակուաները կըսկսի հանել:
Խեղձտղան շատ ցաւ կըքաշէ ինչուան
որ լնտերքին մաշկը ճղքի ու ակուան
դուրս ելլէ, անոր համար կուլայ կը
կանչվըռտէ, և մատը բերանը տա-
նելով՝քաշած ցաւը կ'իմացընէ :

Եւրոպացիք ասանկ ատեն տղոցը
ձեռքը ապակէ, փղոսկրէ, բուստէ
կամինչ և իցէ կարծը ու ողորկ նիւ-
թէ խաղալիկ մը կուտան, որ տղան
բերանը տանելով ու մատին տեղը ա-
նիկայ ցաւած տեղին դպցընելով՝ ցա-
ւըքիչ մը ատեն կը մեզմանայ . և ան
խաղալիկը անդադար լնտերքին քսե-
լովը՝ մաշկը դիւրաւ ճղքուելու շատ
կ'օգնէ, ու առանց շատ ցաւ քանելու
ակուան կը բուսնի : — Ի՞ս խաղալիկ-
ներուն տեղը կրնաս տալ չորցած թու-
զի կտոր մը, որուն կեղևը կաշիի պէս
ըլլալով՝ ներսն ալ անուշ, տղան կը
սկսի կրծել . անով լնտերքին բարակ
մաշկը առանց ցաւ մը տալու կը մաշի
ու կը ծակի, և անոր տակի ակուան
դուրս կ'ելլէ :

ԲԱՆԱՍՏԻՐԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔ



ԱՐԴԱՐ ՀԱՅՐԵՆԱՍՏՐՈՒԹԻՒՆ :



Ի՞նչ ի՞նչ հայրենասիրացդ նկրտիցի
օգտակար ջան : Օի հայրենիս ունի-
ցիք ընտիրս և բարեկեցիկս : Ի՞չա-
զնոյն յառաջ քան զամենայն և հայ-
րենիք ինդրեն 'ի ձէնջ, ընտիրս լինել

։ Տես երես 330 :

ձեզ և բարեկեցիկս, ըստ հարազատ
իմաստից բանիցս : Վանզի անմարթ-
է բարւոյ իմիք հաստատութիւն առ-
նուլ 'ի հայրենիս և բարգաւաճել՝
մինչև ոչ քաղաքացիքն իցեն բարիք :
“ Ուր չիք հայրենիք, ասէր ոմն փի-
լիսոփայ, չեն անդ և քաղաքացիք ” .
այլ ես առաւել ևս ասեմ, թէ ուր
քաղաքացիք չիք՝ չկան և հայրենիք . և
են ինձ քաղաքացիք՝ լնտիրքն 'ի մարդ-
կանէ, որ միայն են պատճառք շինու-
թեան աշխարհի, որպէս և կործան-
ման նորա՝ արք անխրատք և անխա-
զաղասէրք : Եւ արդ որք հայրենիս
ուղիղս խնդրիցեմք, նախ քան զամե-
նայն զանձինս ուղղեսցուք . զի բուն
իսկ հայրենիք մեք եմք անձն իւրա-
քանչիւր, և լաւութիք մեր նեցուկք
են նորա : Եթէ գոյ 'ի մեզ սէր հայ-
րենեաց յօգուտ ազգի մերոյ, լիցի և
յօգուտ կենաց մերոց . իսկ եթէ չիք
յետինս 'ի մեզ՝ խիթամթէ ոչ և ա-
ռաջինն :

Իշխարհ համօրէն վկայէ ստուգու-
թեան բանիս . աղէ ասացէք, ուստի
քակտումն և կործանումն տանց և
քաղաքաց և գաւառաց և պետու-
թեանց . ուստի խոռվութիք և բըռ-
նութիւնք և չարիք յընկերութեան
մարդկան . վասն ոյր պատճառի երկ-
նից վրէժինդրութիւնք ահագինք,
ծածուկ անդնդոց յանկարծ ծովանալ
և զաշխարհ ընկլուզանել, ամպոց փո-
խել զցողն անուշարար 'ի տարափս
հրակայլակս, սանդարամետաց դժո-
խոց բանալ ակօսաձեւ զբերան երկրի
ընդդէմբնակչաց նորուն . ոչ ապաքէն
այս ամենայն վասն չարեաց և անուղ-
ղութեան մարդկան պատահեն յաշ-
խարհի : Իրդարութիւն որ առաջ-
նորդն է մարդկան ցորչափ լսեն նմա-
մարդիկ՝ ծանրացուցանէ զձեռս իւր
'ի ծանրանալ ականջաց նոցա . այնու-
հետեւ ահագնապարիսապ պատուարք
հարելոնի և լինուեի ոչ կարեն զդէմ
ունել նորա, ոչ տիեզերածաւան ով-
կիան կասեցուցանել զվրէժս նորա՝
առ 'ի խնայելց շահաստան աթուոցն

վաճառականութեան . ոչ հազարա-
մեան դրօշք Արիսի և Պելընայ թա-
փեսցեն 'ի ձեռաց նորա զհոռոմ , և
ոչ իսկ աջ ամենակալին հովանի կաց-
ցէ իւրումն Արուսաղեմի :

Իսկ Հայաստան որպէս : Հայա-
ստան կանգուն կայ , եղարք , և յաղթ
և բարեկեցիկ լինի՝ ցորչափ Հայկ
զխողութիւնն վանէ և զխաղաղու-
թիւն 'ի ներքս կոչէ . ցորչափ Տիգրան
և Աղարշակ , Արգար և Աշոտ , այ-
լովքն հանդերձ , ուղղութեանց հըս-
կեն , և զժողովուրդն նմանողս իւ-
րեանց յարդարեն : Իսկ յորժամ Ար-
տաւազդ և Պապ , Արշակ և Արտա-
շիր , և ընդինքնահաճնախարարեանն
'ի թատր անցանէ , և ժողովուրդն ը-
նոսին 'ի նոյն անկղիտանայ , այնու-
հետեւ զի՞նչ : — Այնուհետեւ որդիք
հայրենեաց մերոց . . . այլ ես քստմը-
նիմ յիշատակաւն անգամ , և որպէս
Ճգնեցայց 'ի բան բերել զսոսկումն
սրտիս և անել : թէ այնուհետեւ որ-
դիք հայրենեաց մերոց ուրանան զսէր
նորին հանդերձ սիրովն Աստուծոյ .
ասել , զի անօրէնութիւն բարձրանայ
և պատուհասք իջանեն , և հուր և
սուր արձակին 'ի դործ սատակման .
ասացից և զայն , զի յայնժամ աս-
տուծեղէնն արդարութի ընդդէմ
դառնայ այնմ՝ զոր երբեմն 'ի գիրկս
իւր գտուէր : Ահա կենդանի պատկեր
նորուն իսկ Աստուծոյ վեհութեան և
Աստուծոյ գթութեան . զիարդ . տե-
սէք աւադիկ , զիարդ կայծակունք իմն
շանթից զդիմօքն բոլորին և սրտմը-
տութիւն որոտաձայն ընդ հագափսն
ընթանայ , և լեզուն յանսովորս յար-
ձակի հրացանութիս անիծից : Աար-
սեա Հայաստան և տես , Ճանաչի-
ցես ընդ աստուածակերպ տեսլեամբ
դատաւորիդ այդորիկ զքոյին անխոնջ
յանձանձիչ , զհայր որբոցդ և այրեաց ,
զսիրտ և զկեանս ժողովրդեանդ , ըզ-
քոյինդ՝ Աերսէս . . .

Տես աստանօր և զմարդարէախառն
քոյին մեծ վիպասան , հասեալ յա-
ւարտ երեքհազարեան ամաց պատմու-

թեանն , լցեալ ազգի ազգի կրիւքն
զոր նկարեաց 'ի մագաղաթին , և 'ի
վերայ նորուն խոնարհեալ կորացեալ
զվսեմական յունիցն կամարս յաչա-
մէջսն ժողովեալ , ձեռք վաստակեալք
'ի դպրութեանց՝ զպաղպաղջուն Ճա-
կատիւն , մերժելով զՃաճանչս լուսոյ
յանզբաղ աչացն , և ընդ ծայրս ծնօ-
տից փաղփուն ալեացն արտասուսն նըշ-
խարեալս 'ի սրտացեալ ակնազերացն
քամելով , նստի վարանամիտ և ան-
շփոթ 'ի լալօնս լուինս 'ի տագնապ ան-
հրաժեշտ իմն խորհրդեան : Այ զո՞
այդօրինակ լայցես , ով լորենեան
հանճար . զժամանակն սրընթաց՝ յոր-
մէ գիտացեր այդպէս Ճարտար թա-
փել զվեհազունս ազգիդ 'ի մոռացու-
թենէ : Ահա , ոչ : Օ առաքինիմն ար-
դեօք լայցես և զաղեկեզ հոգւոյդ քո
զհատորս , զարի արքայն Տրդատէս ,
զմեծ հայրապետն Իսահակ , զրաբու-
նապետն Աեսրովլ : Այ ոչ այդչափ :
Ամս դու անշուշտ զերկոսին միան-
գամայն հանդէպ աչաց քոց խորտա-
կեալս , զպերճ մականն արշակունի և
զսուրը գաւազանն պահլաւիկ , յորս
ոչ ժամանեցեր իբրև 'ի գիտակ ձո-
ղաբարճ ամբաւնալ զյոյս քո և զվաս-
տակս մեծամեծս : — Այ առաւել ևս
քան զայդ : — Այ զի՞նչ քան զայդ
առաւել կայցէ , ասա աղազէմ : — Ա-
նք 'ի ներքին 'ի վեհավայր սրտէն յո-
գւոց հանէ դիւանապետն Հայաստա-
նեայց և հեկեկախառն լսին ձայնք .
Ողբամ ես զաշխարհն Հայոց . . .
Օքեզ ողբամ , ով աշխարհ Հայոց ,
վուամենայն չարեացն քոց , և ողբամա-
ռաւել զարեացդ զպատճառսն . ող-
բամզքեզ 'ի քոյսն յանարժանսն քեզ .
'ի դատաւորս քո տմարդիս , անըն-
տրողս իրաւանց և հակառակողս . 'ի
վարդապետսն քո տխմարս , ընդինք-
նահաճն և նախանձուտս . ողբամզքեզ
'ի կրօնաւորսն քո կեղծաւորս և մնա-
փառս . 'ի վիճակաւորս քո հպարտս ,
ծոյլս , ատեցողս արուեստից և վար-
դապետական բանից . յաշակերտս քո
հեղդս յուսումն և փոյթս 'ի վարդա-

պետել . ողբամ զքեզ 'ի ժողովրդականն քո համօրէն , ստահակս , մեծախօսս , անվաստակս , ինասահարս , փախչողս 'ի ժառանգութենէ : Ողբամ զքեզ հայոց աշխարհ , զի վասն չարեացդ այդոցիկ զարթուցեալ է արդարութիւն երկնից 'ի վերայ քո . և ահա հէնք եկեալ 'ի քեզ անհատք , և գերփումն տանց և յափշտակութիւնք . և ահա առումն քաղաքաց և աւերումն ամրոցաց . և ահա տարերաց փոփոխել զենութիւն և մահունս ընդ կենաց մատակարարել . և ահա ահա , աստուածպաշտութիւն մոռացեալ և ակնկալութիւն գեհենի ...

Վլդառն յիշատակք , ով արկածք արտասուելիք : Այլ մեք զի՞ գործեսցուք . լուիցուք և զայս ստուգութիուրումն պատմագրի , լուիցուք զարհուրելով , եթէ " | տանէ քանյ յօտարաց բուսաւ արմատք դառնութէն , . և այսուհետեւ 'ի կեանս անձանց մերոց զնդալով՝ առցուք իրատ զայլս պատմչի , եթէ " Պարտիմք յանձանց , " ուղղութենէ հաշտեցուցանել զլու , " տուած . զի թէ այս լինի , և թշնա , " մեաց սուրն պակասի , և դժուա , " ըինքն մեզ 'ի դիւրինս փոխին , . : Եւ որպէս զուղղութիւնսն գործեսցուք . զաւանձնականն՝ առանձին խորհեսցի իւրաքանչիւր ոք՝ գիտելով զի ոչ միայն հայրենեաց , այլ և ահեղատենին լստուծոյ պարտական է . բայց վասն հասարակաց կենաց՝ կանգնեսցին վարժոցք և վարդապետարանք , կարգեսցին ուղիղ դաստիարակութիք մտաց և սրտից : Դիտեմք արդէն բուռն հարեալ զայսմանէ հայրենասիրաց ումանց , այլ պահանջիմք կըրկնել զջանս , յաւելուզ զկրթութիւն , և կատարելագոյն ընծայել կրթութիւն , և զամենայն հնարս հնարել զի 'ի մարզ եկեսցէ թէ ոչ բոլորն՝ գոնեամեծ կամկէս մասն ազգիս , և թէ ոչ 'ի յետին նրբութիւն ժամանել գոնեա ընդ առաջին կորզանսն անցցէ :

1 Յովհ . Կաթուղիկոս :

Որոց զաւուրբ աշակերտութեան անցեալ իցէ , գիտելով քաջ զի օգուտ հայրենեաց և անձանց 'ի մանկութիւն հաստատեալ է՝ ամենայն խնամով միտդիցեն 'ի հրահանգել զնոսին : Եւ դուք որ 'ի սքանչելին և 'ի դալար վարժողութիւն հասակիդ էք , ծաղկունք յուսոյ մերոյ և տանս Կորամայ , ով հայոց մանկունք , յօժարութեամբ դեգերեսջիք յառաջի եղեալ ձեր վարժու , որով և ձեզ և ազգիդ կենցանութեան լինիջիք պատճառք : Եւ երիտասարդացդ ձեզ յուշ լիցի , զի այժմեան և կենդանի ակնկալութիւն հայրենեացս ձերոց 'ի ձեզ է . ո՛հ , իցէ ուրուք 'ի ձէնջ սիրտն այն անարգ և ապառում՝ որ զայսքան գեղեցիկ յուսով և կարօտով և կարօտութեալ այնպիսւոյ փարելի և բարերարի հօր ապախտ արարեալ , և անփոյթ զօդտէ , զիառաց , զբարի անուանէ , զհետ եւ լանիցէ սողոմնեան երիտասարդին , 'ի գարնայնի տիոցն զգարուն և եթինդիրելով , և հանգոյն վարդից նորուն որ զգլսովն պսակ , թարշամեցուցանիցէ զպիսեան զօրութիւն իւր և զաւուրս : Եւ ոչ մանաւանդ ցանկասցի նմանող լինել այսմ նորահաս վաճառականի՝ որ 'ի գարնան զձմեռն շտեմարանէ , տայ զանձն 'ի ջան և 'ի վաստակ , յափունս և 'ի քաղաքս մատչի բարելիցս , և սիրտ 'ի բուին ընդ ոչ անվտանգ շաւիղս ծովուն զգուշեաւ խաղացուցեալ զլաստափայտն՝ հայրենեաց պարենին բարձող , յետ բազում սաստից դարանակալ տարերաց մերձեալ յընթացիցն կէտ , դէպ ուղղակի կըռէ վստահութեամբ զպսակահամբար նաւուն զառաջն քաջութիւն , արդիւնք և փառք ցանկալի զմուտսն առնեն , և երջանիկ զվայելսն :

Եւ տակաւին ձեռն զգօտւով և տարակոյս զաջօք դանդաշիցէք . հապա , ջան և արիութիւն , եղբարք իմեթէ 'ի յաւիտենից վայրկեան մի պարապոյ ոչ վՃռեցաւ մահկանացուաց , քանիպատիկ ևս թանկագին իցէ մեզ

Հայոցս ժամանակս այս՝ յորում առաւել զգամք կարօտութեանս մերում և պարտուց : Դարտարութիւն՝ ի հայս երբէք ոչ պակասէ, վկայեալ՝ ի ծագաց աշխարհի . որ և յանփառունակ դարս Ուրդոմայ՝ ոչ անմեռ միայն զազգն կացոյց, այլ և զաշխարհս և զպետութիւնս մեծամեծս համակ կենդանացոյց . իսկ զի յաջողութիւն առ դուրս կայ ջանից՝ ընդ այն ո՞ երկմտիցի : Հապա, Հայաստան աշխարհ . ո՞ւր է զօրութիւն քո երկնատուր, ո՞ւր է սիրտ քո անվկանդ և համբերատար, ո՞ւր է ոդին քո զարմանագործ, որով՝ ի քթթել մի ական առաջին ազգ բարեկիրծ գտար յաշխարհի առ Հայկաւ, առաջին վաճառական՝ ի հնումն, և՝ ի սկիզբն նորոցս դարուց առաջին աշխարհակալ առ Արտաշխոիւ և Տիգրանաւ . առաջին աշխարհագումար բանակ քրիստոնեայ առ Տրդատաւ և Կրիգորիւ չորեքհարիւր և քառասուն բիւրուք խաշանշան զինուորելոց . որքան բազմութիւն միով հրաւիրանաւ՝ ի ծոց իւր դիմեալ երբէք չետես խանդակաթ հարանն . Քրիստոսի, և ոչ աստղակաձառխորանք անմահից . առաջին ուսումնասէր և նրբամիտ ժողովուրդ արեելեան առ Աահակաւ, առաջին քաջամարտիկ զինուորուի՛ թէպէտ և ընդ օտար դրօշուք արեելեան կայսերաց՝ ի միում ժամանակի յաղթութեանս փայլակնացայտս կանգնելով յամենայն նահանգս աշխարհի, ի Հայաստան և՝ ի Ուրակիա, ի Պարսկաստան և՝ ի Լոնդոնքարդիա, յաշխարհին Ալանաց և առ դրամբքն Հռովմայ, ի պահակս եգերական Առվկասու և յանմատոյց կիրծս Ալպեայց . ընդ առաջինսն և՝ ի Ճարտարութեան յամենայն դարս . և թերեւս միշտ ընդ առաջինսն թուէիր բարդաւած և հնարագէտ ազինս՝ եթէ եւրոպական դիւրութիւնք և կրթութիք ընդելացեալ էին քեզ, կամ աշխարհօրէն՝ ի միտս հայրենասէր բարդաւածանաց վառեալ էր քո : Ա. Ա.

Եթէ հնարք պակասեն քեզ, ջանք լրց ցեն զթերին, և արիական ոգւով բուռն հար զուղղութենէ որդւոցդ որ պատուական է քան զամենայն բարիս և պատճառ նոցուն . միայն մի վհատիր, մի յուսահատիր . և եթէ զամենայն ինչ իսկ անկեալ կործանեալ տեսանիցես, գիտեալ զի սիրտ անվեհեր կանգուն կայ միշտ առ՝ ի միւսանգամ վերականգնել զամենայն . սիրտ՝ ի մարդում ամրոց է հզօր քան զմիջնաբերդ, ոչ ընկճի՝ եթէ ոչ անձնամատն լեալ : Ինկեր սրբոյ արդարութեան առ քեզ զաստուածայինն արիութիւն, նախ զվհատութիւնն ի բաց խլել՝ ի սրտէ, և ապա զամենայն ախտիցն բոյս, որպէս զի լաւութեանցն միայն որ՝ ի մեցս են տունկք՝ նմանեալ նախաբուսին ադինական արմատոյն՝ կենաց պատճառք լիցին անձանց մերոց . յայն ժամ և բարունակք ընդարձակին մեր, և ոստք ընդ ոստս խառնեալ ծափս հարկանեն ըստ բանի իմաստասիրին Հոռոմոց, թէ Համաբարոյ վարք „ Համաբարոյ վարք „ առաքինեաց քաղցը և հզօր շաղ „ կապք լինին նոցա „ : Այս՝ ի լինել այսորիկ այսպէս, զինչ այլ մնայցէ մեզ . բայց եթէ տալ հայրենասիրութեանս մերում զլրումն արդարութեն զաստուածաիրութեանն կնիք, և գոհ հութեամբ թողեալ զերկին՝ թռանել յերանութիւնսն անզրաւական հայրենեաց :

Յերրորդում մասին զյս հաստատէր ատենախօսն, եթէ՝ ի լրումն արդարացի սիրոյ հայրենեաց՝ հարկ անհրաժեշտ է նմին անանջրպետ լինել՝ ի ճշմարիտն աստուածպաշտութենէ և յաստուածսիրութենէ, որ ամենայն բարութեանց աշխարհի աղբիւրն է և կատարումն, և որ ինքնին՝ ի բնէ զօդէ է եղանաց՝ ի համաշունչ միաբանութիւն : Զնոյն հաւաստեալ և՝ ի պատմութեանց ազգիս յառաջնոցն և՝ ի վերջնոցս, ի գովելեացն և՝ ի վշտալեաց, դառնայր և յորդորական զբանն առնէր առ ունկնդիրսն՝ ի փոյթ արդար հայրենասիրութեան, որ իցէ օգտակար ազգին առ հասարակ և անձնն իւրաքանչիւր, և յաստուածպաշտութիւն բերեալ և առ՝ ի նմանէ ազգեալ : Մեզ ոչ՝ ի գէպ թռեցաւ տեղիս և զայն մասն տալ՝ ի լոյս :